ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«07» հունիսի 2016 թվականի N:188-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՍԱՐԱՏԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի N51-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 53-րդ և 54-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ, 5-րդ, 7-րդ, 13-րդ և 17-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 12-ի N956-Ն հրամանի 2-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի

Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի ապրիլի 14-ի N01/07.2/3732-16 գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ղեկավարի 2016 թվականի մայիսի 12-ի գրությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սարատակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2016 թվականի փետրվարի 25-ի նիստի թիվ 5 արձանագրությունը և ծնողական խորհրդի 2016 թվականի փետրվարի 24-ի նիստի թիվ 7 արձանագրությունը, Անահիտ Հովհաննիսյանի 2016 թվականի մարտի 31-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Սարատակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 3 տարուց ավելի խորհրդի անդամ հանդիսացող.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված անդամ Հովհաննես Սարգսյանի լիազորությունները,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Անահիտ Սուվարյանի լիազորությունները,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված անդամ Միշա Ղրզոյանի լիազորությունները,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Բախչո Հակոբյանի, Վեղեմ Վարդանյանի լիազորությունները,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված անդամներ Լիլիթ Սիմոնյանի, Նելսիկ Հովհաննիսյանի լիազորությունները:

2. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված և 2015 թվականի հուլիսի 1-ին Խորհրդի կազմում հաստատված Անահիտ Հովհաննիսյանի լիազորությունները՝ համաձայն իր դիմումի:

3. Խորհրդի կազմում 3 տարի ժամկետով հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված Ռուբեն Մանուկյանին,

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Արմեն Պետրոսյանին, Թաթուլ Մանուկյանին,

3) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարատակ համայնքի ղեկավարի ներկայացմամբ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված Միշա Ղրզոյանին,

4) Դպրոցի մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված Մարինե Կարապետյանին, Միքայել Ղաբուզյանին,

5) Դպրոցի ծնողական խորհրդի կողմից առաջադրված Լիլիթ Հովհաննիսյանին, Շողակաթ Հովհաննիսյանին:

4. Հաստատել Խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելվածի:

5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2011 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզային ենթակայության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդների անվանական կազմերը հաստատելու մասին» N 51-Ա որոշման N94 հավելվածը:

Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2016 թվականի հունիսի «07» N188-Ա որոշման

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՍԱՐԱՏԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Մանուկյան Ռուբեն	- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի կողմից առաջադրված,
Մանուկյան Թաթուլ	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Պետրոսյան Արմեն	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված,
Ղրզոյան Միշա	- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից առաջադրված՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ,
Կարապետյան Մարինե	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Ղաբուզյան Միքայել	- մանկավարժական խորհրդի կողմից առաջադրված,
Հովհաննիսյան Լիլիթ	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված,
Հովհաննիսյան Շողակաթ	- ծնողական խորհրդի կողմից առաջադրված:

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզպետարանի աշխատակազմի ղեկավար՝ Խ. Պողոսյան
Իսկականի հետ ճիշտ է